ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ՂԱՆԹԱՐՋՅԱՆ, ՍԵԴԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Զարգացած երկրներում արդյունաբերական սեփականության (ԱՍ) մասը ձեռնարկության ընդհանուր արժեքի շուրջ 35%-ն է, իսկ ԱՍ առանձին օբյեկտների գինը հասնում է տասնյակ միլիոն դոլարների, որը բացատրվում է այդ օբյեկտների իրավաբանական ձևակերպման նկատմամբ երկրների որդեգրած քաղաքականությամբ: Այն թույլ է տալիս ապահովել ձեռնարկության ակտիվների կառավարման ավելի բարձր մակարդակ, որը հիմնված է ձեռնարկությունում ԱՍ օբյեկտների (ԱՍՕ) ավելի մանրակրկիտ հաշվառման, գնահատման, պահպանման և ներդրման գործընթացների վրա[1]: Վերջինս ենթադրում է ինովացիոն տարբեր նախագծերի ներդրում:

Ինովացիոն նախագիծը ինովացիոն կարևորագույն հիմնախնդիրներ իրականացնող ինքնուրույն միջոցառումների համալիր է: Այն այնպիսի աշխատանքների հաջորդականություն է, որն ընդգրկում է գիտական հետազոտություններ, նախագծային-կոնստրուկտորային և տեխնոլոգիական մշակումներ, արդյունաբերական արտադրություն և շուկայական իրացում: Ինովացիոն ստեղծագործական գործունեության արդյունքը որպես կանոն լինում է ԱՍՕ, որը դառնում է նրա տիրոջ սեփականությունը, եթե ապահովված է այդ օբյեկտի իրավական պաշտպանությունը[2]:

Շուկայական տնտեսության պայմաններում ԱՍՕ-ի իրավունքների պաշտպանությունը թույլ է տալիս ամրապնդել այն կազմակերպությունների շուկայական և ֆինանսական դիրքերը, որոնք իրականացնում են ինովացիոն նախագծեր:

Արտասահմանյան պրակտիկայում (ԱՄՆ, Կանադա և այլն) մեծ տարածում է գտել հեռանկարային գյուտերի նախնական գնահատման համակարգը, որը գործում է երկու փուլով: Առաջին փուլում, հաշվի առնելով ազդեցությունը տեխնիկական մակարդակի վրա, որոշվում է ԱՍՕ-ի գիտատեխնիկական արժեքը, իսկ երկրորդ փուլում գործում են շուկայական չափանիշները, այսինքն՝ որոշ ապրանքների շուկայական պահանջարկի դինամիկան, մրցակցությունը, անհրաժեշտ ներդ-

[1] Տե՛ս http://hi-audit.ru/otsenka-intellektualnoi-sobstvennosti-nematerialnyh-aktivov/

[2] Տե՛ս **Кудашев В. И.** Экономика и управление инновациями. Учебное пособие. Минск. 2015:

ռումների քանակը և այլն:

Հայտնի է, որ առաջատար երկրներում գործում են աուդիտորական բազմաթիվ ֆիրմաներ, որոնք սեփական փորձի և մշակված մեթոդական ցուցումների հիման վրա կարողանում են կարճ ժամկետում գնահատել ձեռնարկությունում ներդրված ԱՍՕ-ի արժեքը: Չինաստանում ոչ պետական ձեռնարկությունների ոչ նյութական ակտիվների գնահատումը հանձնարարվում է հատուկ գրանցված մարմնի, որի աշխատակիցներն ամեն տարի պարտադիր անցնում են որակավորում (ատեստավորում) երկրի արտոնագրային վարչությունում:

Նմանատիպ մոտեցումով սույն հոդվածի հեղինակներից Ս. Ղանթարջյանի կողմից 2000-ական թվականների սկզբին ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունում մշակվեցին ԱՍՕ-ի գնահատման օրենքի, ստանդարտի և մեթոդական ցուցումների նախագծերը, որոնք հնարավորություն էին տալիս ստանալու հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչպե՞ս պատրաստել գնահատմամբ զբաղվող մասնագետներին, ո՞վ իրավունք ունի կազմակերպելու նրանց ուսուցումը և տալու որակավորում, ինչպե՞ս չեզոքացնել անբարեխիղճ գնահատողներին տրված արտոնագրերը և այլն:

Վերը նշված օրենսդրական ակտերի նախագծերը մշակելիս հաշվի էր առնվել նաև առաջատար երկրների փորձը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ֆինանսական աղբյուրների հայտնաբերմանը: Այսպես, Գերմանիայում, սկսած 1970-ականներից, խրախուսվում է փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը, այսինքն՝ ինովացիոն ֆիրմաներին տրվում են երկարաժամկետ փոխառություններ 10-15 տարվա համար: Ֆրանսիայում գիտատեխնիկական հիմնադրամն օժանդակել է 25000 ինովացիոն նախագծեր: Ճապոնիայում գործում են շուրջ 170 տարածաշրջանային կենտրոններ, որոնք 10 տարվա ընթացքում տվել են վարկեր՝ 88.2 մլրդ իեն ընդհանուր արժեքով:

Իսկ ինչպիսի՞ն է ինովացիոն գործընթացի պատկերը ժամանակակից ՀՀ-ում: 2005 թ. ընդունվել են «ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգը», իսկ 2006-ին՝ «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության որոշումը «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին»: Համաձայն այս իրավական ակտերի՝ սահմանվել են ինովացիոն գործունեության տեսակները, ինովացիոն գործունեությանը ցուցաբերվող պետական աջակցության նպատակը և խնդիրները: Օրենքով սահմանվել են նաև ինովացիոն գործունեության պետական աջակցության հիմնական ուղղությունները՝ վենչուրային, ներդրումային հիմնադրամների և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ստեղծում, ֆինանսական և ներդրումային աջակցություն, երաշխիքների տրամադրում, պետական գույքի օգտագործման իրավունքի տրամադրում, աջակցություն ինովացիոն ենթակա-

ռուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը, ինովացիոն գործունեություն իրականացնող կադրերի պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում[3]:

ՀՀ կառավարության որոշմամբ 2009 թ. ապրիլի 23-ին ստեղծվել է էկոնոմիկայի նախարարության ենթակայության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»՝ Գյումրու, Վանաձորի, Հրազդանի և Կապանի մասնաճյուղերով[4], որոնց հիմնական նպատակն էր իրագործել ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների այն հիմնական դրույթները, որոնք հնարավորություն կտային շուկայացնել ՀՀ-ում գրանցված ՄՍՕ-ն՝ իրական արժեքի որոշմամբ: Սակայն առ այսօր կարելի է տեսնել ու լսել գովազդային հայտարարություններ, որոնց համաձայն՝ անշարժ գույքի գնահատումով զբաղվող կազմակերպություններն առաջարկում են հընթացս գնահատել նաև մտավոր սեփականության օբյեկտներ:

Վերջերս ՀՀ ազգային կենտրոնը որոշել է ուղղել թույլ տված սխալները, ուստի մշակել է «Նորարարությունների կառավարում» կրթական ծրագիր, համաձայն որի՝ մասնակիցները 40-ժամյա վերապատրաստումից հետո ձեռք կբերեն հետևյալ ունակությունները.

✓ Կիրառել ստեղծագործական և քննադատական մտածողությունը միջանձնային, բիզնես և կառավարչական կոմունիկացիաներում:

✓ Խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման միջոցով գեներացնել վառ և հետաքրքիր գաղափարներ, ստեղծել նոր ուղղություններ աշխատանքում, կարիերայում, բիզնեսում:

✓ Կիրառել ոչ ստանդարտ որոշումներ ամենատարբեր իրավիճակներում:

✓ Հասկանալ «ինովացիայի» ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև այդ գաղափարը հաջողակ բիզնեսի վերածելու գործընթացի էությունը:

✓ Հմտանալ բիզնես մոդելավորման ու պլանավորման գործընթացներում և ձեռք բերել համապատասխան ունակություններ, որոնք անհրաժեշտ են «սթարթափ» ստեղծելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար:

✓ Տիրապետել բիզնեսի ճիշտ մեկնարկման բոլոր իրավական հարցերին և մտավոր սեփականության օբյեկտների պահպանման, կառավարման և առևտրայնացման համապատասխան ընթացակարգերին:

✓ Օգտագործելով «բիզնես մոդելը» որպես պլանավորման ու վերլուծության առաջադեմ գործիք՝ կազմել ապագա բիզնեսի և ձեռնարկության զարգացման տեսլականը, դրա գրաֆիկական, տեքստային և

---

[3] Տե՛ս **Վ. Ռ. Պողոսյան**, ՀՀ ինովացիոն ներուժի գնահատման հիմնախնդիրները, ատենախոսություն Ը.00.02 մասնագիտությամբ, Եր., 2016, էջ 92-93:

[4] Տե՛ս http://www.innovcentre.am

կոնցեպտուալ նկարագրություններն ըստ հաջողակ բիզնես կազմակերպելու առանցքային բաղադրիչների:

✓ Ձեռք բերված գիտելիքներն օգտագործել սեփական բիզնես հիմնելու համար:

✓ Ձեռնարկատիրությանը օժանդակող պետական աջակցության ծրագրերի, առևտրային միավորումների և բիզնես ցանցերի մասին ստացած տեղեկատվությունը օգտագործել սեփական բիզնեսի զարգացման համար:

✓ Ստեղծել «սթարթափ» (start-up) ընկերություններ, վավերացնել գաղափարը, առևտրայնացնել այն կամ ղեկավարել գործընթացը:

Վերը թվարկված խնդիրներից վերջինի համար առանձնացվում են ՄՍ առևտրի իրականացման երկու ուղիներ[5].

✓ Օգտագործում սեփական արտադրությունում:

✓ Իրավունքների զիջում (վաճառք) կամ արտոնագրի փոխանցում շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

Տեխնոլոգիաների հանձնումը և ձեռքբերումը կատարվում է առևտրական հիմքերի վրա, այսինքն՝ արտոնագրված գյուտի հիման վրա բացառիկ իրավունքների առք ու վաճառքը կատարվում է որոշակի իրավաբանական գործաձևերի հիման վրա:

Տարբերում են իրավաբանական երեք ձևեր:

1. Վաճառքի իրավունքի հանձնում: Այս դեպքում արտոնագրատերը վաճառում է (զիջում է) իր բացառիկ իրավունքն արտոնագրված գյուտի նկատմամբ՝ առանց ժամկետային սահմանափակումների և այլ պայմանների:

2. Լիցենզիոն պայմանագիր: Այս դեպքում արտոնագրված գյուտի տերը թույլ է տալիս ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձին կատարել որոշակի ներդրում և սահմանված ժամանակահատվածում մեկ կամ ավելի գործողություններ, որոնց վրա գյուտի տերն ունի բացառիկ իրավունքներ:

3. «Նոու-հաու» պայմանագիր: Բացի պայմանագրային ձևից՝ «նոու-հաու» փոխանցվում է նաև նյութական տեսքով (փաստաթղթեր, լուսանկարներ, պերֆոժապավեններ, միկրոֆիլմեր):

Ինչպես երևում է, վերը նշված առևտրայնացման գործընթացը ենթադրում է լիցենզիոն և զիջման պայմանագրերի կնքում:

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 1995-2016 թվականների արդյունաբերական սեփականության պաշտոնական տեղեկագրերի՝ մինչ այժմ կնքվել են ԱՍՕ-ի նկատմամբ իրավունքների զիջման/փոխանցման և լիցենզային 1676 պայմանագրեր, որոնց 96 %-ը բաժին է ընկնում ապրանքային նշաններին (տե՛ս աղյուսակ 1): Հատկանշական է նաև այն հանգա-

[5] Տե՛ս **Ս. Լ. Ղանթարջյան**, Նորարարությունների կառավարում և մտավոր սեփականության օբյեկտների գնահատում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2004, 102 էջ:

մանքը, որ այս պայմանագրերի ճնշող մասը կնքված է հանրապետությունում գործող ձեռնարկությունների միջև, և միայն շատ փոքր մասն է բաժին ընկնում արտասահմանյան ձեռնարկություններին:

Աղյուսակ 1

Տեղեկատվություն 1995-2016 թվականներին արտոնագրերի և ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման/զիջման և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին

Տարեթիվ	Գրանցված լիցենզային պայմանագրեր (ներառյալ ենթալիցենզային պայմանագրերը)		Գրանցված զիջման պայմանագրեր (ներառյալ ֆրանչայզինգի պայմանագրերը)		Ընդհանուր
	Արտոնագրեր	Ապրանքային նշաններ	Արտոնագրեր	Ապրանքային նշաններ	
1995	0	0	0	0	0
1996	0	0	0	0	0
1997	0	0	1	0	1
1998	0	0	0	0	0
1999	0	14	0	62	76
2000	0	9	0	50	59
2001	0	4	1	58	63
2002	0	11	1	53	65
2003	0	11	1	50	62
2004	1	9	1	54	65
2005	1	12	4	59	76
2006	2	27	7	108	144
2007	1	11	1	75	88
2008	1	21	4	69	95
2009	2	24	4	60	90
2010	4	14	3	73	94
2011	1	19	2	59	81
2012	1	17	1	95	114
2013	3	21	1	78	103
2014	5	23	2	83	113
2015	2	11	2	114	129
2016*[6]	2	43	2	111	158
Ընդհանուր	26	301	38	1311	1676

Ինչպես երևում է բերված աղյուսակից, գյուտերին վերաբերող գրանցված լիցենզիոն պայմանագրերի քանակը 26 է, ընդհանուր կնքվածների (327) շուրջ 7.95 %-ը, իսկ զիջված պայմանագրերինը 2.81% է:

Բնավ չմխիթարող այս պատկերը հուշեց համեմատել նրանց ևս մեկ կարևորագույն ցուցանիշի հետ, առանց որի անիմաստ է բարելա-

[6] Տվյալները՝ 2016 թ. հունիսի 1-ի դրությամբ:

վել միջազգային շուկայում ՀՀ ՄՍ առևտրականացման դիրքերը: Այդ գործոնի անվանումն է «Սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճան», որի միջոցով հաշվարկվում է իրավունքի պաշտպանության միջազգային ինդեքսը: Դա մի ցուցանիշ է, որով սեփականության պաշտպանության տեսանկյունից չափվում են երկրների ձեռքբերումները:

Նշված ինդեքսը չափում է երկրի ձեռքբերումները 3 կատեգորիաներում:

1. Իրավական և քաղաքական միջավայր (դատական համակարգի անկախություն և դատարանի անաչառություն, օրենքի գերակայություն, քաղաքական կայունություն, կոռուպցիայի մակարդակ):

2. Գույքային սեփականության իրավունք (գույքային սեփականության իրավունքի պաշտպանություն, սեփականության գրանցում, փոխառությունների մատչելիություն):

3. Մտավոր սեփականության իրավունք (մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն, արտոնագրային իրավունք, մտավոր սեփականության իրավունքի խախտումների մակարդակը):

Սեփականության իրավունքի միջազգային ինդեքսում գնահատման սանդղակը սահմանվում է 0-ից 10-ը: Նույն տրամաբանությունը կիրառվում է երեք բաղադրիչների և դրանց տասը կետերի վրա:

Ըստ վերոնշյալ 3 կատեգորիաների և դրանց բաղկացուցիչ 10 կետերի՝ Հայաստանի գնահատման սանդղակը ունի հետևյալ պատկերը[7]՝ (աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Մտավոր սեփականության իրավունք

	գնահատում	գլոբալ	ռեգիոնալ
1. ընդհանուր	2.7	120-129	16-20
2. մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն	4.1	76-129	9-12
3. արտոնագրերի պաշտպանություն	-	-	-
4. հեղինակային իրավունք	1.4	98-105	16-20

Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ-ն մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությամբ թե՛ գլոբալ և թե՛ ռեգիոնալ տեսակետից ևս զբաղեցնում է ոչ բարենպաստ դիրքեր, իսկ արտոնագրերի պաշտպանությունը ընդհանրապես բացակայում է, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ՄՍ-ին վերաբերող օրենքներում այդ կետն առկա է:

Համաշխարհային շուկաներում արդեն վաղուց մտավոր սեփականությունը դարձել է հիմնական զենք մրցակցային պայքա-

[7] Տե՛ս http://internationalpropertyrightsindex.org/countries

րում. ստեղծվում են կազմակերպություններ, որոնց գործունեությունը մտավոր սեփականության առևտուրն է:

Համաշխարհային խոշոր ընկերությունները մշակում են ինովացիոն գործունեության կառավարման նոր մոտեցումներ՝ ապահովելով իրենց ԱՍՕ-ի իրավունքների պաշտպանությունը և նրանց անօրինական օգտագործման դեմ պայքարը:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ սեփականության (այդ թվում՝ արդյունաբերական սեփականության) իրավունքի փոխանցման, սահմանափակման և կորպորատիվ հարաբերությունների հարցերի լայն շրջանակը անցումային տնտեսությունների համար եղել և մնում է արդիական: Այս համատեքստում տնտեսության ինովացիոն զարգացումը չունի այլընտրանք, որի կառուցակարգերի (մեխանիզմների) մշակմանն ուղղված ջանքերը կնպաստեն երկրի տնտեսության երկարատև կայուն զարգացմանը:

Բանալի բառեր - *մտավոր սեփականության օբյեկտներ, իրավունքների պաշտպանություն, ինովացիոն նախագծեր*

САРКИС КАНТАРДЖЯН, СЕДА НАГАПЕТЯН – ***Охрана прав на интеллектуальную собственность в инновационных проектах***. – В статье отмечается, что наряду с принятием законов об охране объектов интеллектуальной собственности в Армении отсутствуют законы по оценке их стоимости. Стоимость оценивается в организациях, занятых оценкой недвижимости, что недопустимо. Кроме того, статья знакомит с опытом передовых стран.

Ключевые слова: *объекты интеллектуальной собственности, охрана прав, инновационные проекты*

SARKIS KANTARJYAN, SEDA NAHAPETYAN – ***The Protection of Intellectual Property Rights in Innovative Projects.*** – The article notes that, along with the adoption of laws on intellectual property rights protection in Armenia there are no laws to assess their value. It is estimated in the organizations involved in the assessment of real estate, which is unacceptable. The description of the experience of advanced countries is presented.

Key words: *objects of intellectual property, protection of rights, innovative projects*